Ֆ. ՇԻԼԼԵՐ

ԱՆՁՈՒԿ

Ա՜խ, վայրենի, սառն ու խավար
Էս անդունդի խորքերից
Թե գըտնե՛ի մի ճանապարհ
Ու ապրե՛ի ես նորից...

Ահա հեռվում ճոխ բըլուրներ
Մըշտագարուն, ծաղկազարդ։
Ինչո՞ւ, ինչո՞ւ չունիմ թևեր,
Այնտեղ թըռչեմ ես ազատ։

Քընարն այնտեղ ուրախ հընչում,
Խոսում է ձայնն երկընքի,
Ձեփյուռները մեղմով շընչում,
Բույր են խընկում գարունքի։

Պերճ սաղարթում շողշողում են
Պըտուղները ոսկեվառ,
Ձըկան այնտեղ բուք ու ձըմեռ
Ու ծաղկունքը միշտ դալար։

Ա՜խ, ինչ լավ է՝ այն անխըռով
Ջինջ օրերի լուսի մեջ,
Այն անթառամ ծաղկանց բույրով
Հարբել անվե՛րջ ու անվե՛րջ...